առաջինը բարոյական պատճառներն են։ Կեանքի ծանր պայմանները աղքատ և թշուառ ընտանիքներում աւելացնում են մահացութիւնը, բայց աղքատ ընտանիքներում աւելի են լինում ծնունդները քան հարուստ ընտանիքներում։

«Պետութիւնը պէտք է հոգայ աղքատ և թշուառ ընտանիքների տնտեսութիւնը բարւոքել։ Բայի սրանից, պէտք է եռանդուն կերպով մաքառել ազգի կորստեան պատճառ եղող խայտառակ արատների դէմ։ Բայց դրա համար անհրաժեշտ է վերականգնել յարգանքը դէպի կրօնքը, վերադարձնել եկեղեցուն մատաղ սերնդին դաստիարակելու ազատութիւնը. որովհետև միայն հաւատն է տալիս թոյլ մարդկանց բարոյական նեցուկ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գագիկ թագաւորի Աւետարանը.

—(Երուսաղէմ հ. 2556) 1028—1064 թուական.

Երուսաղէմի Հայոց սուրբ Յակոբայ վանքի նշանաւոր ձեռագրերից է Կարսի կամ Վանանդ գաւառի Աբասի որդի Գագիկ թագաւորի աւետարանը, որը 1908 թ. իմ ճանապարհորդութեան ժամանակ մանրամասն նկարագրել եմ և այժմ հրատարակում եմ հրաւիրելով մասնագէտների ուշադրութիւնը։

Կարսի փոքրիկ թագաւորութիւնը ծագումն առնելով Անիի Բագրատունիներից 961 թուին, շարունակւում է մինչև 1064 թիւը, ուրեմն ուղիղ մի դար։ Այդտեղ առաջին թագ կապողն էր Աշոտ երկաթի թոռ Մուշեղը, որ 24 տարի թագաւորելուց յետոյ, ժառանգ թողեց իւր որդի Աբասին, իսկ սա 45 տարի կառավարեց։ Սորա որդի Գագիկը, որ կրում էր Շահանշահ մեծագոչ տիտղոսը 35 տարի իշխելով, տիրապետած եղաւ, երբ Անին ընկաւ յունաց և յետոյ պարսից ձեռքը, հեռանելով Վասպուրականի Ցենեքերիմ և Անիի Գագիկ թագաւորներին, ապաստան խնդրել յունաց Տուկիծ կայսրից։ Վերջ-

ջինս, միւս դահաղուրկ թագաւորների պէս, Գագիկին շնորհեց Փոքր Ասիայում Ծամնդաւ բերդը Ամասիա, Կոմանայ և Լառիսու քաղաքներով, ուր դժբախտ հայ իշխանը անցրեց իւր վերջին օրերը:

Սորա հայը Աբասը պատմութեան մէջ յիշւում է իբրև Կարսի մինչև այսօր էլ կանգուն մնացած Առաքելոց եկեղեցու շինող, իսկ Գագիկը, որի օրով Կարս քաղաքը պարսիկներից չարաչար աւարի մատնուեց և որը իւր իշխանութիւնը պահպանում էր հլու հպատակութիւն կեղծելով Պարսկաստանի իշխող Ալփարսլանի առաջ, յիշատակութեան արժանի գործ արած չունի: Սակայն մեր ձեռքը հասած գրչագիր աւետարանը, որի ընտիր մագաղաթը, գեղեցիկ գլխագրերով զարդարած խոշոր երկաթագիր գրչութիւնը և մանաւանդ չափազանց հարուստ և ընտիր մանրանկարները, գրչութեան աւետարի գլուխ գործոց է, վայելուն ապացոյց է թագաւորի գրասիրութեան, ճաշակի և առատաձեռնութեան: Միայն պիտի ցաւել, որ բարբարոս ձեռքեր կտրել հանել են չափազանց շատ նկարներ և նամանաւանդ գլխաւոր յիշատակարանը, որի մէջ մեծ հուսանկանութեամբ պատմական հարուստ տեղեկութիւն կունենայինք Կարուց թագաւորութեան մասին: Այդ ձեռագիրը իւր արտաքին տեսքով ըստ ամենայնի արքայավայել գիրք է և հաւանական է Գագիկը գրել էր տուել իւր և իւրայինների համար:

Ձեռագրիս մի յիշատակարանը առաջին անգամ տպագրել է Հ. Գ. Զարբհանալեանը իւր Նախնեաց Թարգմանական Մատենագրութեան էջ 460, որից օգտուել ենք մենք մեր ռուսերէն «Սուրբ Գրքի Հայերէն Թարգմանութեան պատմութիւն» աշխատութեան էջ 166 № 33, առանց ձեռագրի մասին որևէ մերձաւոր տեղեկութեան:

Մագաղաթ, 47×36 մեծութիւն. 32×10 գրութիւն. 11′5 տառին լուս. 4 ս. վերևի, 8 ս. կողքերի լուս. հաստութիւն 15 ս. կազմը կարմիր թաւիշով է ծածկուած. ա. կողի վրայ արծաթէ շրջանակ 6 ս. լայնութեամբ, չորս ներս ընկած անկիւններով, մէջում խաչ արծաթէ 36×25 ս. թևերով. թևի շերտի լայնքն է 5′6 ս: Ամբողջը զարդարուն է քարերով—ըստ լայնութեան 7-ական, ըստ երկարութեան զարձեալ եօթը, չորս քար ևս շրջանակի ներս ընկած անկիւններն ունեն: Քարերի գոյնն է. չորսը շրջանակի կենդրոնում՝ մի մի ոսպիտակ, երկերկու կանաչ, երկերկու կարմիր, զարձեալ երկերկու կանաչ. իսկ լայնութեան քարերի կարգը հակառակն է—ոսպիտակ-կարմիր-կանաչ-կարմիր: Բոլորը միասին՝ 4 ոսպիտակ, 12 կանաչ և 12 կարմիր: Չորս անկիւնները կապոյտ է: Քարերով զար-

գաղուած է նաև խաչը, 31 քարերով. հնգակոն խաչի ծայրերում, 12-ը կենդրոնում. 2-ը խոշոր սպիտակ է, 2-ը բաց նարնջագոյն, 15-ը կանաչ, 13 կարմիր: Խաչի կենդրոնում կայ մի մեդալիոն, չորս զմբուխտ և 2 եռագուտ քարերով. 5-դը ընկել է: Առաջին քարերը թանգագին չեն. վերջին վեցը իսկական են, բայց շատ փոքր:

Ունի երկու կապիչ արծաթէ մայրերով և կոճակներով:

Փակիչը միակաւոր արծաթ է և ունի բարձրաքանդակ խոշոր գրերով յիշատակարան. «ՀՐՇԳՐԻՐ ՍԲ ԱՒԵՏՐՆՍ ՅԻՇՏԿ Է. ԱՐՔՅԻՆ ՀԱՅՑ ԳԱԳԿԱՑ ՇՀՆՇԱՀ ԿՈՉՅԼՑ. ՈՐԴՅՆ ԱՄԲԱՏՑ ԹՎ. ՌՃԾԲ ԳՐԻԳՈՐ ՄԵԼՊՐՏ ՎԲԳՊՏՍ ԱՐԾԹՊՏ ԵՏՈՒ ԶՐԴՐԵԼ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՑ ԻՄՑ Ի ՍԲ ԵՐԼԷՄ Ի ԴՌՆ ՍԲ ՅԿՈԲԱ»: Արծաթը ոսկեզօծած է:

Զեռ. միջից կտրաւուած հանուած են բազմաթիւ նկարներ. պակասել են նաև ամբողջ թերթեր: Դրիգոր վ-ը կազմել տալով, հատա թղթով կարկատել է տուել կտրուած մասերը և թերթեր աւելցրել թերի մասերի համար: Եւ իսկապէս նմանութեամբ հին խոշոր երկաթագրի թերի մասերը լրացրած են: Սակայն կրկին կազմելիս վերևի լուսանցներից աւելի խոր են կտրել և վնասել նկարները:

Զգրուած թերթեր. թղ. 1-3. 5. 6. 186. 440. 477բ-480 թերթի 480 երկուքն, 15 տող:

Թղ 4ա խորան ա՝ «կան. ա՝ յոր՝ դ. չորքն». երեք սիւնով, չափազանց գեղեցիկ խորան, ոսկի, կարմիր, կապոյտ, կանաչ և սպիտակ ներկերով: Վերևից սիրամարգերի մասը կտրուած է: Սիւները բիւզանդական-յոնիական են, խոյակի գլուխները արծիւներ զոյգ զոյգ կանգնած կորիւգիտերի պէս: (Թղ. 4բ. Սիւները յոնիական-բիւզանդական են: Թէև կանոնի մէջ 4 և 5 են, սակայն գրած է. «կանոն ը յոր՝ երեքն».

Թղ 5ա. Եւսեբիոսի առ Կարպիանոս թուղթը, որ կազմելիս սխալմամբ երկրորդ տեղ են դրել: Այդ թղթի վերջում կայ. «Ներողութիւն սուրբ ոգորմէ Դագկայ Շահանշահի»:

Թղ 5. խորաններին սիւները աւելի կորնթական են. «կանոն յոր՝ երկուքն. կանովն Զ»: Թղ 5բ «Յորում երկուքն»-«Կանոն Ե՝ յոր՝ երկուքն»:

Թղ. Մաtթէոս 9. Նկարուած է խոշոր գեղեցիկ խորան, որի տակը ուղղակի սկսում է Մաատթէոսի Աւ.: Ամբողջ թերթը գրուած է կարմրով, չափազանց խոշոր երկաթագրով. Թղ 9ա վեցական տող. 9բ 15-ական տող. «Գիրք ծննդեան՝ Յի՝ Քրիստնաւ զԴաւիթ ասքայ»:

Թղ. 10. Նոր է գրուած, նմանութեամբ հին գրին. «Դաւիթ ծնաւ.. մինչև եկեալ». Թղ. 11 կարուած է սառբին լուս. 18×32 և մի կաղ էլ՝ ա սիւնակից 15×18. Թղ. 11ա ունի երկու զարդ։

Թղ 12. 1 թռչուն և 5 զարդ։ Փոքրիկ զարդեր կինուում են իւրաքանչիւր երեսի վերայ, խոշոր գլխագրերին կցուած» Թղ 13 կա. սա. լուս. 26×32. կարուած է նաև 2-ական տող բնագրից Թղ 13ա և 7-ական տող Թղ 13 բ. Նկարը եղել է առաջի երեսի վրայ։ Թղ 14 կա. 16′5×32 երկուական տող բնագրից։

Թղ 15. կարուած է 16′5×32 բնագրից 2 և 1 տող։ Թղ 16ա մի թռչուն, նոյն 16 բ. Թղ 17. նոր է. Թղ 18. միջից կարուած է 27×19-՝ա լուս. մի մեծ հատուածը։ Թղ 18ա բնագրի միջտեղում նկարուած է-Սատանան փորձում է Յիսուսին, Սատանան կանգնած է իւր ամբողջ հասակով, նրա շուրջը վխտում են ամեն տեսակ կենդանիներ. գայլ, արջ, արծիւ, փիղ, էշ, վագր, լինձ և օձ։ Դիմացի նկարը՝ անկատած Յիսուս, կարուած է։ Թղ 18բ սատանան կանգնած բարձր աշտարակի վրայ,-դիմացինը կարուած է։

Թղ. 19. կտր. 19×12. բնագրի միջից։ Թղ 19ա Յիսուս ժայռերի մէջ կանգնած ձեռքը բարձրացրած «երթ յետ իմ սատանայ»ին ասում է։ Սատանան կարուած է։

Թղ 20. կտր. 11′5×11 ը լուս. միջից նկարը եղել է 20բ Թղ 20ա լայն կողքի լուս. նկարուած է մի դեղեցիկ խորան 11′5×5.

Թղ 21. կողքի լուս. կտր. 13′5×8. Թղ 21բ լեռան քարսղը. նստած է Յիսուս, դիմացը մի աշակերտ, ապա ժողովուրդ։ Առաջինները նստած են բարձր դեռրի վրայ։

Թռչունները և ծաղիկները կրկնուում են բոլոր երեսներում. գլխագրերը գրուած են սովորականից աւելի խոշոր և տպա տաս ի դէպի լուսանցք նայող ծայրերին նկարել են ծաղիկներ, թռչուններ, պտուղներ, կենդանու գլուխներ և զարդեր։ Փառադիր տառերի բոլոր տարրերը պահուած են իրենց սկզբնական դրութեամբ։ Ներկերի մէջ ոսկի չկայ, այլ միայն կինաւոր է։

Թղ 26. կտր. միջի լուս. 14×8′5. Թղ. 28 կտր. միջի լուս. 12′5×11. Թղ. 29բ լուս. կայ գինանշան թռչունների մի զարդ։ մի տոր կարուած է։

Թղ 30բ լուս. 2 փոքր խորան Թղ 31ա խորան միջակ մեծութեամբ.

Թղ 33—36 նոր է գրուած բոլորագրով. «կամ ի տատտակէ թուղ... եւ ասատեաց նոցա Յիսուս և ասէ»:

Թղ 37 կար. 13×11 միջի լուս. Թղ. 40բ լուս. խորան, Թղ 44 կար. լուս. 32×11'5:

Թղ 46. կար 16×9'4. Թղ 49 կար. 25'5×17. Թղ 49ա խորան. Թղ 51. կար. 18×9.

Թղ 53. կար. ստորին լուս. 16'5×32. Թղ 54ա լուս. գեղեցիկ խորանանման զարդի մէջ գրուած «է» տեսրահամարը:

Թղ 56բ փոքրիկ խորան:

Թղ 57 կար. լուս. 16×10. Թղ 57բ Նկար առիւծի գլխի և թաղի:

Թղ 55 կար. լուս. 23×9. Թղ 61 նորոգուած է երկաթագրով: Թղ 63 կար. կողքի և ստորին լուս. ամբողջութեամբ: Թշ 66 կար. բնագրի մէջ 18×13. Թղ 66բ խորան լուսանցքում: Թղ. 70 կար. ստորին անկիւնը 26'5×19'5. Թղ 70ա թերթահամարը «Թ» գեղեցիկ խորանի մէջ: Թղ 73 կար. ստորին կէս թերթը. 32×3 : Թղ. 73 կար. 22×2'5 լուս. և մի լուսանցքը: Թղ 74ա խորան:

Թղ 75 կար. ստորին անկիւնը 24×18. Թղ 78ա թերթահամարը «ԺԲ» գեղեցիկ խորանի մէջ:

Թղ 82ա 84բ խորան. Թղ. 85 կար. ամբողջ շերտ միջից 32×1 5'5

Թղ 86 կար լուս. վերևի անկիւն 22×11. Թղ 87 նորոգուած է երկաթագրով:

Թղ 89 կար ստորին լուս. 20×15 Թղ 94ա ե տառը սրբի գլխով: Լ. թերթահամարը պարզ խորանում: Թղ 94բ խորան. Թղ 97ա խորան.

Թղ 101բ «եւ եղեալ արտաքս Յիսուս ի տաճարէն գնայր» գրուած է ոսկիով, ե թեւաւոր զարդագիր է: Թղ 62ա «եւ մինչդեռ նստէր ի լերինն Ձիթենեաց» գրուած է կարմրով: «Խ» թերթահամար խորանում:

Թղ 103 կարուած է ստորին կէս թերթը 32×22. Թղ. 105ա խորան, դիմացը «եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս» կարմրով: Թղ 106ա խորան: Թղ 111 նորոգուած երկաթագրով: Թղ. 114 կար. ստորին շերտը 32×22. Թղ 115 նորոգուած է երկաթագրով. Թղ 118ա Կ թերթահամար. էջի մէջի շերտում. Յիսուս խօսում է աշակերտների հետ. «տրտում է ոգիս» և ապա չոգած «եկայց յաղաւթս»: Լուսապսակ մի այն Յիսուսն ունի:

Թղ 119 կար. ստորին շերտը 32×24. Նոյնպէս 121 - 32×23.

Թղ 123 կտր վերևի անկիւնը 23'5×20. Թղ. 174. կտր. ստորին շերտը 32×24. 125ա Պիղատոսի դատաստանը. Պիղատոսը բազմած մօտը երեք ամբաստանողները. առաջ կանգնած է Յիսուս ձեռքը կարկառած, երկու զինուոր և 2 քահանաներ:

Թղ 126 Ը թերթահամար առանց զարդի: Թղ 127ա Չարչարանք Քրիստոսի: Կան միայն ժողովուրդ և զինուորներ. Յիսուսի մասը կտրուած է 16×15'5: Թղ 129 Նորոգուած երկաթագրով: Թղ 131 կտր. թերթի մեծ մասը 32×34'5. Թղ 134 կտր. միջի լուս 18×18:

Թղ 132բ Իւղաբերը չորս կանայք, հրեշտակ և բաց գերեզման. Թղ 133 կտր ստորին մասը 32×26. Թղ 135բ Յիսուս բլուրի վերայ աջ և ձախ 5 և 6 աշակերտները «Եւ մատուցեալ Յիսուս խաւսեցաւ ընդ նոսա»: Թղ 135. կտր. ստորին շերտը 32×25.

Այսքանով վերջանում է Մատթէոսը, որի վերջի բառերը կտրուած են: Թղ 135բ Զաւիշգանց խոշոր կարմիր երկաթագրով գրուած է 8 տող. «Զստացող | սրբոյ աւ եստարանիս | զԳագիզ | Շահան շահ զոր | դին Աբա | սայ յի | շեսջիք | ի տէր Յիսուս Քրիստոս»:

Մարկոս. Թղ 197. կտրուած է սկզբի խորանը 32×16. Թղ. 137ա «Սկիզբն . . առաքեմ զհրշ» գրուած է խոշոր ոսկեգիր երկաթագրով 5-ական տող, երկու լուս.

Թղ 138 կտր. ներքևից 26'5×22, նկարի մի մասը պահուած է: Թղ 139ա խորան լուս կտր. ստորին շերտը 32×24'5.

Թղ 140ա խորան, կտր. ներքևից 22'5×15: Թղ 141, 142 կտր. անկիւնը 20×19'5: Թղ 143բ Անդամալոյծին մահիճով առաստաղից լջեցնում են. Յիսուս բազմած, բազմութիւն ժողովրդեան և անդամալոյծը չուաններով կախած: Թղ. 144բ, 146ա խորան: Թղ 145ա «Ղ» թերթահամար: Թղ 147 կտր. ներքևի շերտը 32×12'5. Թղ 147բ խորան. նաև 148բ 153բ 157ա, 162բ, 168ա, 172բ, 173բ, 175բ 179, 181ա. 185. 187բ: Թղ 149, 150, 151. 153. կտր. ներքևի շերտը 32×15. նաև Թղ 155, 156, 161, 164, 166 վերևի շերտը: Թղ 157ա Ճ թերթահամար զարդի մէջ: Թղ 159ա «Մ» թերթահամարի. զարդի մէջ. Թղ «Յ» Թղ 167ա: Թղ 171 կտր. ստորին շերտը. նաև, 172, 173, 175, 180, 182, 187, 188, 190, 191, 192, 198, 200, 201, 204, 207, 208—211, 211, 214, 216, 217, 221:

Թղ 174. նորոգուած է երկաթագրով. նաև 178, 205, 218, 241, 321, 362, 365, 449, 454, 457, 464:

Թղ 175. «Ն» թերթահամար, 183. «Շ» 191. «Ո» 199. «Չ» 1, 213 «Ջ».

Թղ 202 նորոգուած է բոլորովին, նաև թղ 371, 459, 474–477ա.

Թղ 206 կար. ներքևից 13×16'5. թղ 206բ նկար վերջին ընթրեաց. մի մասը կտրուած է պահուած են 9 աշակերտ, չկայ Քրիստոսը միւս երեք աշակերտներով։ Խորան թղ. 214բ

Թղ 214բ Յիսուսի նկարը գլուխը կտրուած։

Թղ 220 կար. ստորին շերտը 32×35,5. թղ. 222 կար. ներքևի անկիւնը 22×31.

Աւետ. վերջանում է. «Զի երկնչէին». հետևեալ թղթի մի էջի վրայ, թղ 222բ կայ, կարմիր երկաթագրով. «Ջստացող | սուրբ աւետարանիսզգա | ... ա | շահ գորգին | աբասայ. | շեսջիք յի տեր տեր |»։

Յիշատակարանի տակը եղել է խոշոր նկար, հաւանական ստացողինը, կտրուած է, պահուած է շրջանակի մի մասը։

Ղուկաս. Թղ 223ա խորան. «Աւետարան ըստ Ղուկայ։ Բանդի... խրատն հաստատի» գրուած է ոսկեդիր, խոշոր երկաթագիր։

Թղ 223ա աւետարանմամբ «Ռ», 231–«Ճ». թղ 239բ «Վ», 247ա «Տ», 255ա «Ր» թղ 263ա «Ց» թղ 271ա «Ի». 287ա «Ֆ». 295ա «ԼԻ» 303ա «ԼԸ» 611. «ԼԹ.» 319 «Խ».։—կտրուած են ստորին շերտեր թղ 224, 228, 229, 233, 236, 238, 242, 243, 245, 246, 248, 250, 251, 253, 256, 257, 267, 273, 274, 276, 279, 281, 306, 311, 313, 314, 324, 333, 336, 339, 349, 550, 360, 371,,,,։

Կտրուած են ներքևի մի անկիւնը և մէջը թղ. 226, 262, 263, 382, 290, 293, 316, 317, 318, 322, 325, 329, 332, 353, 354–356, 367, 369,,,։

Խորաններ թղ. 234 բ, 245 ա, 247 բ, 249 ա, 253 բ, 271 բ, 283 բ, 291 բ, 310 ա, 325 բ,,,։

Թղ. 235բ «ի հինգեւտասանեւրորդի ամի տէրութեան Տիբերեայ կայսեր»—գրուած է կարմրով։

Թղ. 244ա Նկար Յիսուս և տատանայ թղ. 244բ տատանան վոքձում է Յիսուսին։

Թղ. 330ա Յիսուս և մեծատան որդի։ Թղ. 332ա 340ա նոր մարդու նկար, թանաքով։

Թերթատամարներ 327ա «ԽԱ» 335 «ԽԲ» 343ա «ԽԳ», 251 ա «ԽԴ». 359 «ԽԵ», 368 «ԽԶ»,,,։

Թղ. 353բ Պատկերը կտրուած է, կայ միայն Յիսուսի գլուխը։

Ղուկ. վերջը դարձեալ կտրուած է. պահուած է

371բ յիշատ. կարմրով. «Զստացող | արքայաւեհս | ռաճիս զզա | զիկ Շամանն | ... աբասայ եւ զ | զորաճզուխս | թագոնի եւ զմ | արեմ յիշես | | թերի:

Ցովհաննես Թղ 372ա Շատ դեղեցիկ խորան, ամբողջ էջը ոսկեգիր, «Աւետարան ըստ Յովհաննու. ի սկզբանէ ... Աստուած ամենա»:

Թերթահամարը—Թղ 372 ա, «ԽԷ», 480 ա, «ԽԸ», 388 ա, «ԽԹ», 396 ա, «Ծ», 404 ա, «ԾԱ», 412 ա, «ԾԲ», 420 ա, «ԾԳ», 428 ա, «ԾԴ», 436 ա, «ԾԵ», 444 ա, «ԾԶ», 452 ա, «ԾԷ»,,,:

Կիսատ կարուածներ—375, 382, 386, 392, 418, 421, 425, 429, 430, 453,,,:

Ներքևի շերտը կտրուած—378, 381, 385, 398, 399, 409, 417, 421, 431, 433, 434, 435, 443, 456, 459, 460, 461, 463, 465, 467, 468, 471, 472,,,:

Խորանք—380բ, 391բ, 995բ,399բ, 405բ,411 ա, 412բ,416ա,,,:
Թղ 419բ ի ծնէ կոյրին հարցաքննում են հրէաները:

Թղ 442. «Ամեն ամեն ասեմ ձեզ»—(ոչ է ծառայ մեծ) գրուած է ոսկով:

Թղ. «477ա բոլորգրով. «ի թուին հայոց ՌՃԾԲ. ի փետրվարի ԻԲ. հրամանաւ տեառն Մինասայ աստուածաբան վարդապետի: Վերստին նորոգեցաւ սուրբ Աւ. ձեռամբ յոգնամեղ Պօղոս երիցու Ղալաթիացւոյ, զոր յառաջագոյն կայր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ի դուռն սուրբ Յակոբայ որք հանդիպիք առասջիք Աստուած ողորմի»:

Լուսանցազրուիւնք.

Մատթեոս. «Որ ոք խնդրէ ի քէն»—լուս. «ում»—որում:
«սոդոմացւոց դիւրագոյն լիցի»—լուս. «յաւուրն դատաստանի»:
«ոչ աղաղակեսցէ և ոչ լուիցէ ոք»—լուս. «Ոչ հակառակեսցի եւ».
«դշխոյն հարաւոյ»—լուս. «արքայակինն»:
«վասն Հերովդիայ»—լուս. «դայ»:
«եղբաւր Նորա»—լուս. «իւրոյ»:
«եւ խոտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ»—լուս. «զպատուիրանն»:
«մարգարէացաւ ի վերայ ձեր»—լուս. «վասն»:

«զի մի ումեք ասասցեն թէ նա է քրիստոսն»—լուս. «Յիսուս»։
«եւ բազում չարչարանս չարչարել»· լուս. «անարգել»։
«թագաւորս ազգաց»—լուս. «երկրի»։
«բիւր քանքարեայ»—լուս. «բազում տաղանտոյ»։
«ասէին աւրհնութիւն որդւոյ»· լուս. «Ովսաննա»·
«ոչ հայիս յերեսս մարդոյ»· լուս. «կան»։
«մահն ի հարսանիսն» լուս. «ընդ նմա»·
«Հիւանդ էի ի բանտի» լուս. «մերկ էի, և ոչ զգե-
«ցուցեք զիս»։

Լուսանցագրութիւնք ունին նաև միւս Աւ. բայց որովհետև նկարների պատճառով չափազանց շատ կտրտուած թերթեր կան, ուստի լուսանցագրութիւնից բեկորներ են մնացել։

Նկարները, լուսանցազարդերը և ծաղկագրերը ներկայացնում են նուրբ ճաշակ և բնականութիւն։ Գոյները պահուած են բաւական թարմ, եթէ յատկապէս եղծուած չեն։ Կարելի է ամբողջ ժողովածու կազմել այն բազմատեսակ թռչուններից, որոնցով առատօրէն զարդարուած են մանաւանդ առաջի և երկրորդ գրքերը։ Բոլոր թռչունները, սակաւաթիւ կենդանիների և 2 անգամ մարդու դլուխները բնականին շատ մօտ են և իրական նկարագիր ունին։ Իսկ խոշոր պատկերների մէջ գեղեցիկ և արտայայտիչ են մարդկանց դէմքերը։ Քրիստոս նկարուած է ոսկեայ լուսապսակով, յունական խաչով· միայն լեռան քարոզի տեսարանում նրա դիմացի նստած առաքեալը լուսապսակ ունի, առանց խաչի։ Նկարներ կտրողները կարծես աւելի խաղացել են· որովհետև կտրելիս նկարի մասը թողել են, ամբողջը չեն առել· բայց ընդհանրապէս խիստ անդուր են վարուել։ Աւետարանս ընդհանրապէս քիչ է գործածուել։ Մագաղաթը, թէև չունի Կիլիկիան շրջանի նրբութիւնն ու փափկութիւնը, բայց փայլուն և ապիտակ է· խնամքով է մշակուած և պահուած է շատ մաքուր· Ձեռագիրը իւր մաքրութեամբ այնպիսի տպաւորութիւն է թողնում, որ պէտք է եզրակացնել, թէ մինչև աւերիչի ձեռքն ընկնելը պահուել է մեծ խնամքով։

Տառերը խոշոր են, կէտադրութիւնը բաւական կանոնաւոր, ուղղագրութիւնը հին, շեշտեր հանդիպում են, բայց ոչ յաճախ։

Բնագիրն ունի հատուածների նշանները, տառահամարներով որոշուած, եւթներեակներ և լուսանցքում նկարուած բազմաթիւ խորանները, սակաւ բացառութեամբ, գտնւում են

եւթներեակների բաժանման տեղում։ Խորանները զարդերի պէս ներկայացնում են ամենատարբեր ձեւեր։ Ոսկին քիչ է գործածած և այնքան էլ փայլուն չէ։

Դլխաւոր Ցիշատակարանի կորստեան պատճառով ձեռագրի գրութեան տարին և տեղը որոշել չենք կարող։ Դաւիկը Կարսում թագաւորել է մինչև 1064 թիւը. կարող է մինչև այդ ժամանակը և Կարս քաղաքում գրել տուած լինի. բայց անհաւանական չէ, որ ձեռ. պատրաստել է տուել Փոքր Հայքում, իւր բնակութեան նոր մնջավայրում, ուր զրկուած գրական իշխանութիւնից, կրօնաւորական հակումներով աւելի էր տրամադրուած։ Ձեռ. արուեստի ծագումը ճշդիւ որոշելու խնդրում նրա գրութեան տեղը խիստ կարևոր է։ Հայկական մանրանկարչութեամբ պարապողը յատուկ ուշադրութեան պիտի առնի Դաւիկի Ա. առանձնապէս, երբ իւր ուսումնասիրութեան խնդիր դարձնի զարդագրերի կամ կենդանագրերի վրայ։ Այս ձեռ. մեր առաջ ունինք դեռ ևս այն շրջանը, երբ տառը զարդարող մարդու, թռչնի կամ կենդանու նկարները միացած են իրար հետ պարզ գծերով, տառն ու կենդանին իրանց խսկական կերպարանքով։

Մեսրոպ եպիսկոպոս.

ԲԱԴԱ ԳԻՒՂԻ ԱՒԵՐՈՒՄԸ

Բ.

1905 յուզիչ թուականը, նախապատրաստութիւններ. Բեռուգ Աղայ Կարաբեգովի այցը Բաղային. Ալլահեար բեգ Զուլղադարովը եւ նրա հասարակաց դիրքը։

1905 թուի փետրվարեան արիւնահեղ ընդհարումն թուրքերի և հայերի մէջև Բաղում հայ կեանքի մէջ յեղաշրջումն առաջացրեց, և այդ թուականը Անդրկովկասեան հայ ազգաբնակութեան համար մի յուզիչ և ցնցող տարի էր։ Հասարակաց կեանքը գիւղերում և քաղաքներում աննկարագրելի շարժման մէջ էր. մանաւանդ գիւղերում բնակչութեան երիտասարդ մասը արթնութեան մէջ էր։ Ապագայի և այն մօտիկ ապագայի վերայ նայում էր խիստ խոժոռադէմ, սպասում